304. Ատտալիա. Գարամանն եւ Օսմանեանք.– Յամի 1422, ըստ Ժամանակագրին մերոյ, «սպան սուլթան Մուրատն Բ զՂարամանին տղան (Մոհիամմէտ), որ եղեւ բռնին նմա, որ գնաց վերայ նորա. եւ նա մտաւ ’ի Էնթէլայու բերդն, եւ ’ի ճէնկն զարկին զնա թօփով, եւ արարին կտոր կտոր: Եւ ունէր երեք որդի. եւ նա ետուր զՂարամանայ երկիրն՝ Իպրահիմին, մեծ որդւոյն, ու երկուքին այլ՝ Հիսային ու Ալայիտինի՝ ’ի դրան արքունի ուլաֆայ (ռոճիկ) արար սուլթանն

314-5. Սենեքերիմայ Արծրունւոյ սերնդոց գալստեան ’ ի Կիլիկիա՝ վկայէ եւ Ասորի պատմիչն Միխայէլ. «Ընդ այն ժամանակս (յելս կոյս ԺԱ դարու), արքայազունքն Հայոց՝ որ յաւուրս Վասլի կայսեր եկեալ ’ ի Վասպուրականայ… որ եւ զկնի ժամանակաց պակասեցան ’ ինենգութենէն Յունաց եւ տկարացան, մտին յերկիրն Կիլիկեցւոց, եւ բռնացեալ ունէին բազում գաւառս դղեկօք եւ ամրոցօք»:

318-9. Կրակա կամ Կրակկա.– Ըստ նորագիւտ յիշատակարանաց՝ առաւել եւս հաւաստի՝ որիշ լինել ’ի ծովեզերեայն Կրագայ, եւ գտանիլ ’ի լեռնակողմանս միջնաշխարհի Կիլիկիոյ, թէպէտ եւ չեղեն մեզ բաւական յիշատակք գրոց՝ ճշգրտել զդիրսն. այլ կարեւոր են բանքն, եւ կարեւորագոյն իրք նշանակեալ ’ի նոսին, բնականք եւ բանականք. զորս յայտ առնէ գիտնական գրիչ գործոց Փիլոնի եբրայեցւոյ, յամի 1328, այսպէս. «Ես տկար ոգի եւ բազմամեղ անձն՝ Յակոբ, կրեցին բանասիրաց Վարժապետաց, ’ Իրանկաբ կոչեցեալ, յորում որակ որակ գոյնս քարանց ելանէ. զոր ոմանք հրահալելի արուեստիւ եփեալ՝ գայ արծարծեն, եւ յառաջ բերեն զանազան գործս երկաթոյ, առ ’ի պէտս ազգի ազգի անօթոց. Հոգւոյն ձեռնտուութեամբ՝ եւ ըստ անձին իմոյ բաղձանաց՝ ետու գրել զեօթն տառս իմաստասիրական, որ է շարագրեալ յեռամեծ իմաստասիրէն Փիլոնի: Եղեւ զրաւ գրչութեան սորա ’ի վանս՝ որ կոչի Ջերմաղբիւր. Ես տոմն կարգեալ ’ի թագաւորէն Հայոց Չորրորդ Լեւոնի, եւ Թագադրին եւ Պայլին Հայոց Աւշնի տեառն Կոռիկաւսոյ. ձեռամբ Առաքելի սրբասէր եւ կուսակրօն քահանայի:… Էր թիւն յաբեթական տումարի եւ Հայկազեանս սեռի ՉՀԷ, ’ի թագաւորութեանն Հայոց Դ Լեւոնի, որդւոյ բարեպաշտ թագաւորին Աւշնի, եւ ’ի պայլութեանն